

ՈՒՍՏԱՒՈՐԻ ԱԶՔԵՐՈՎ...

Հայաստան, երկիր դրախտավայր, լեռներու եւ հանգած հրաբուխներու, արեւու եւ սառնորակ աղբիւրներու երկիր, ուր կը հասունանան ամենահամեղ միրգերը, եւ գեղեցկագոյն ծաղիկները՝ իրենց հազարբուրեան ծոցը կը բանան լոյսին:

Հայաստան, որ իր պատմութեան աւելի քան երկու հազարամեայ երկարող ճամբուն՝ թողած է հիացումի առարկայ հրաշակերտ յուշարձաններ, որոնց չօչափելի վկաններն են հնագիտական քաղաքներու եւ ամրոցներու, տաճարներու եւ կիլիկայային կառույցներու մնացորդները:

Հայ ժողովուրդը՝ իր բազմադարեան դոյութեան ընթացքին՝ միշտ պայքարած է յանուն իր անկախութեան եւ հաւատքին, եղած է աշխարհի ամենախաղաղասէր ժողովուրդներէն մէկը:

Հայ ժողովուրդը՝ պինդ բռնած է այդ հողը, պահպանած է զայն, եւ ասով՝ անուղղակի կերպով պաշտպանած է նաեւ բոլոր Արեւմուտքը. ահա՛ այս պատճառով՝ ան նկատուած է Արեւմուտքի զինակիրը, աննկուն պահակը՝ Մասիսներու երկնամերձ աշտարակին վրայ կանգնած: Միշտ աւերուած է, եւ միշտ շինուած. միշտ գերուած է, եւ միշտ ազատագրուած. միշտ սպանուած է, եւ միշտ վերակենդանացած: Յաւիտենական նշանակութիւն ունի, մեր եւ նաեւ համաշխարհային պատմութեան համար, Աւարայրներէն մինչեւ քսաներորդ դարու Սարգսրապատներու հերոսները ծնող ժողովուրդին դոյութիւնը: 1918ի Մայիսին, մէկուկէս միլիոն զոհուածներու արիւնէն վերածնաւ, կենդանացաւ. եւ նո՛ր երգով ան յարութիւն առաւ յաղթական:

Անցեալի՝ ողբի եւ ուրբի Հայրենիքի պանդուխտ մէկ բեկորս, երկու անգամ

բախտն ունեցայ այցելելու «Նոր Հայրենիքին»: Առաջին անգամ, հոն, մեր պապերուն դեռ կանգուն յուշարձաններուն առջեւ, մեր սուրբերուն եւ դիւցազներուն լուսապսակ հողիացած ճակատները՝ սրբաւոր քարերու վրայով՝ երկիւղածութեամբ համբուրեցի:

Անոր յառաջադիմութեան համայնապատկերը տեսնելով՝ հրճուեցայ. յուզումով եւ արդար հպարտութեամբ վերադարձայ Վենետիկ:

Երկրորդ անգամ, այս Սեպտեմբերին, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի ազնիւ հրաւերով՝ ներկայ եղայ աղբային մշակոյթին պանծալի հանդէսներէն մէկուն, Յովհաննէս Թումանեանի 100ամեակին: Իսկապէս հոյակապ երեւոյթ մըն էր. մեծիւ եւ լաւ կազմակերպուած տօնակատարութիւն:

Հարիւր տեսակ միջոցառումներով նախապատրաստուած էր այս յորելեանը. մեծ բանաստեղծին դործերուն բազմաթիւ նոր հրատարակութիւններ, դործերուն թարգմանութիւնները՝ բազմաթիւ օտար լեզուներու, թատերական նոր ներկայացումներ, շարժանկարի, երաժշտութեան, նկարչութեան, արձանագործութեան նոր ստեղծագործութիւններ, բանաստեղծին ծննդավայրին յուշարձանները, բնակարաններուն նորոգութիւնները, թանգարանային սարքաւորումները եւն., ո՞ր մէկը պատմեմ:

Թումանեան՝ հայ ժողովրդական քնարի մեծ վարպետը. «Մի այնպիսի մեծութիւն է, որ կարող է մի ժողովուրդ պարգևեալ անել պատմութեան առաջ» ըսած է Յովակ Պանդատեան, 1913ին: Ո՛չ միայն իր ժողովուրդին համար, այլ նաեւ աշխարհի՝ համամարդկային մեծութիւն

ճանչցուեցաւ Թումանեան: Համեղրայրութեան առաքեալն է. «Ամբողջ մարդկութիւնը մի ընտանիք» կարգախօսը իրենն է:

Հետեւաբար, հպարտութեամբ կրնանք ըսել որ թէ՛ իբր խոնարհ ժողովուրդի պարզունակ հոգեբանութեան յստակատես երգիչ, եւ թէ՛ իբր խաղաղութեան, եղբայրութեան քարոզիչ, Թումանեան իր յորելեանի տօնակատարութիւններով՝ ազգային պարունակէն դուրս կու գայ այլեւս, եւ կը դառնայ միջազգային դէմք. իբր քերթող՝ համաշխարհային բանաստեղծութեան մեծերէն մէկը:

Իր մեծագոյն արժանիքը կը մնայ միշտ՝ հայրենի մշակոյթի լաւագոյն աւանդները վերապրեցնելը. զանոնք մշակեց իր հավերալեզու, եւ դարձաւ հայ բազմամեկի խօսքով, եւ դարձաւ հայ բազմադարեան դրականութեան սիրելի եւ շատ կարգացուած հեղինակներէն մին: Իր բանաստեղծութիւնը ժողովուրդինն է. ժողովուրդին քնարին երգը, որ խոհերու եւ յուզական քաղցր ապրումներու սքանչելի պատկերացումը կու տայ. գիւղական կեանքի աննշան ծաղիկները՝ իր գրչին տակ կը դառնան մաքուր, սիրային քնարի անկը դառնան մաքուր, սիրային քնարի անսպառ աղբիւրներ եւ դրական գեղեցկուսպառ աղբիւրներ եւ դրական գեղեցկութեան յուշարձաններ: Թումանեանի ըստեղծագործութիւնները, հետեւաբար, հայ ժողովուրդի սէրերուն, ողբերուն, աւանդութիւններուն, սրտի եւ հոգւոյ հարստութիւններուն հայելացումը կարելի է համարել:

Հուսկ՝ Թումանեան Հայ Քրիստոնեայ ժողովուրդին ընտիր զաւակն ըլլալով՝ իր ժողովուրդին ընտիր զաւակն մնանահատակ ժողովուրդին հաւատքին մնանահատակ ժողովուրդին հաւատարիմ. շատ սիրած է ցած է միշտ հաւատարիմ. շատ սիրած է եւ երգած՝ իր ժողովուրդը, Հայրենիքը եւ անոնց գեղեցկութիւնները, եւ զանոնք իբր անմահ ծաղիկներ՝ սրտին մէջ խունի նման այրած է, նուիրելով Բարձրեակին:

«Լուսաւորչի Կանթեղ»ին հեղինակին՝ նոր փայլ եւ մեծութիւն կու տայ այս հաստատմը, որ շատերէն կ'անտեսուի:

Այո՛, Թումանեանի բարի հոգին, իր ապրած ժամանակներուն՝ «երբ տիրում էր

ահն ու վախը, մութ խաւարը», հաւատքի յստակատես աչքերով տեսաւ, եւ միութարուեցաւ՝ որ իր պաշտելի ազգին վերայ հսկող անմար կանթեղ մը կայ, որուն լոյսը՝ Արագածի կատարէն մինչեւ Միածնի Իջման սուրբ խորանը կ'երկարի. ան կախուած է երկինքէն, առանց պարանի, եւ մշտավառ է՝ մեծ սուրբի մաքուր արցունքով. այդ երկնային ջահը՝ Աստուծոյ աչքն է, պայծառ եւ հայրական, որ տեսական կը հսկէ Հայաստանի վրայ:

Երեւանի եւ Դսեղի մէջ կատարուած յորելեանի հանդէսները բացուեցան հանդիսաւոր համազումարներու նիստերով. առաջինը՝ Սնդուկեանցի նորակառոյց հոյակապ թատրոնին մէջ, եւ երկրորդը՝ Սպենդիարեանի անուան Օփերայի մէջ: Լայնատարած երկու բեմերու խորքին կախուած հսկայական դիմանկարներու մէջէն՝ Թումանեանի ազնիւ գլուխը՝ երկնային լուսաւորի նման կը ճառագայթէր. լայնախոհ ճակատէն վար՝ աղեղնաձեւ թաւ յօնքերու խորշին մէջ ամփոփուած, անյատակ ծովի նման խաղաղ աչքերուն ընդմէջէն՝ հեղահամբոյր, ազգասէր, մարդասէր եւ բանաստեղծ հոգին, սիրոյ ժպիտով ողողուած էր կարծես: Դիմանկարներու կողքին գրուած էր արծաթեայ 100 թիւը:

Երկու բեմերն ալ ծաղիկներով զարդարուին էին. սեղաններուն ետեւ 50ի չափ թոռները դրուած էին պաշտօնական անձնաւորութիւններ եւ զանազան ազգերու ներկայացուցիչներ: Հոն էին նախագահ Ա. Միկոյեան, զօրավար Յովհաննէս Բաղդամեան, Հայաստանի նախագահ Ն. Յարութիւնեանը, կուսակցութեան ընդհ. քարտուղար՝ Ա. Քոչինեան, վարչապետ Պ. Մուրատեան, նախարարներու բազմութիւն, Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ՝ Վ. Համադասպեանը, Գրադէտներու Միութեան նախագահ՝ Թովգեան, քարտուղար Ալաջաջեանը եւ շատ ուրիշներ:

Նիստերը երկար կը տեւէին, պաշտօնական խօսք առնողներու ցանկը շատ հարուստ էր. ամէն ազգի եւ լեզուի ներկա-

յացուցիչներ բեմ կը հրաւիրուէին, իրենց յարգանքի խօսքը ըսելու. անոնք դրուատիքը կը հիւսէին Թումանեանի եւ անոր ծնունդ տուող Հայ ժողովուրդին:

Անհասկնալի լեզուներով արտայայտուած ճառերը կը թարգմանուէին պաշտօնական երեք լեզուներէն մէկով կամ միւսով՝ հայերէն, ռուսերէն կամ անգլիերէն: Շատ հետաքրքրական եւ հաճելի էր լսելը, անխտիր, համայնապար եւ ոչ համայնապար երկիրներու ներկայացուցիչներէն, որ Արարատը կը պատկանի Հայաստանին, բնութիւնը եւ պատմութիւնը սեպհականացուցած են զայն Հայերուն. Արարատը՝ խորհրդանշին է Հայաստանին, անջնջելի նկարը հայ դրօշին, որուն հաղարամեայ մշակոյթը, դրականութիւնը, քնարը ներշնչուած են Արարատով, եւ կը փաստէին Թումանեանով թէ «Պիտի դայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած, հաղար հաղար լուսապայծառ հոգիներով ճառաքած ու երկնահաս թր բարձունքին, Արարատի սուրբ լանջին, կենսաժպիտ իր շողերը պիտի ժրպտան... բանաստեղծները պիտի դուլեն քո նոր կեանքը, նոր երգով, նոր խօսքով, իմ նոր հայրենիք, հզօր հայրենիք»: Այս եւ ասոր նման խորհրդածութիւններ օտարներու կողմէն՝ կը զգուէին հայ ունկըղիներու հայրենասիրական զգացումները. նիստերու երկարատեւ ժամերը վայրկեաններու պէս կը սահէին:

Պարսկական կառավարութեան ներկայացուցիչին ելոյթին սկզբնաւորութիւնը յատկանշական էր. ան երբ հրաւիրուեցաւ խօսքի, նախ դրուատեց զբացի Հայ եւ Պարսիկ ժողովուրդներու՝ բաղմադարեան խաղաղ բարեկամութիւնը, «որ միայն ըսաւ - Ե. դարուն առաջին կիսուն խանդարուեցաւ՝ Պարսկաստանի իշխող Սասանեան Հարստութեան քանի մը բռնակալներու ընկճող քաղաքականութեամբ, որով՝ անոնք փորձեցին Հայաստանը դրաւել, եւ Հայերը իրենց դաւանական տեսակէտին դարձնել. Հայերը այդ շրջանին է որ իրենց պատմութեան ամենահերոսական էջերը արձանագրեցին. Աւարայրի

դաշտին մէջ, բռնութեան դէմ զէնքով՝ եւ զոհերով ո՛չ ըսին: Եւ այսօր, հոս, յաւերժական Հայաստանի գեղականոյց եւ կանաչադարձ մայրաքաղաքին մէջ, անցեալի այդ տխուր հալածանքներուն համար, համայն Հայ ժողովուրդէն ներումն կը խնդրեմ՝ Սասանեաններու եւ Պարսիկ ժողովուրդին կողմէն»:

Այս որ ըսաւ՝ սրահը զդրդաց, յուզուեցաւ, ծափերու հրաբխային ժայթքումով՝ ջերմութիւնը բարձրացաւ. հայ-պարսիկ բարեկամութեան՝ կեցցէները տեւեցին երկար վայրկեաններ:

Նիստերու ընդմիջումները 20 վայրկեան կը տեւէին. այդ առիթներուն՝ արտասահմանի հայ հիւրերը կը ծանօթանային հայրենիքի պետական, բարձրաստիճան ղեկավարներուն, ինչպէս նաեւ օտար հիւրերուն. օգտակար ու հաճելի զրոյցներ կ'ունենայինք հետեւին, եւ փոխադարձ համակրանքի ջերմ կապեր կը ստեղծուէին:

Տօնակատարութեան մաս կը կազմէին նաեւ Օփերայի ներկայացումները. այսպէս՝ Տիգրանեանի «Անոյշ»-ին՝ Օ. Տուրեանի կողմէն վերամշակուած օրինակին ներկայացումը, ուրիշ թատրոններու դերուումը, կերպարուեստի ցուցահանդէսները, պատմական յուշարձաններու այցը. կուսակցութեան կեդրոնական կոմիտէի եւ ՍՍՀ Գերագոյն Սովետի ընդունելութիւնները, մշտադրաղ կը պահէին բաղմահարկը հիւրերը:

Սեպտ. 21-ին, Երեւանի մէջ կատարուեցաւ Թումանեանի Տուն - Թանգարանին պաշտօնական բացումը: Լուսապայծառ առաւօտ մը, Արարատի ալեգարդ զապար զեռ վարդագոյն էր, մեղմ զեփեռը Երեւանի փողոցներուն, հրապարակներուն ածունեներուն սիրուն ծաղիկները եւ կանաչը հեշտաղին կ'օրօրէր. տուն թանգարանը տանող բոլոր ճամբաները զարդարուած եւ անսովոր եռուղեռի մէջ էին. ամէն հասակի բաղմութիւն մը հաւաքուած էր, ոտակալներու շքախումբը՝ զմայլելի շրջանակ կը կազմէր: Երբ հասան հիւրերը՝ Ձէքիճեանի երգչախումբը,

որ դասաւորուած էր չէնքին ճակատի կամարներուն մէջ, հնչեցուց «Ծաղկեր Աղատ» եւ «Բա'մ. փորոտան» երգերը. ժողովուրդը անգսպելի կեցցէներով ողջունեց այս բոլորը:

Հիւրերը բարձրացան չէնքի մուտքի առջեւի պատշգամբ, ուր զետեղուած էր բարձրախօսը. արտասանուեցան ճառեր՝ հայ եւ ռուս լեզուներով, բացատրելու համար տեղւոյն նուիրականութիւնը եւ թանգարանային բնոյթը. հոսակ՝ մուտքը փակող ժանեակը կտրելով՝ մտան ներս, ուր Թումանեանի այրին, Օլիա Մաճկալեանը, հայրենիքի ոսկի աշնան մեղրածոր միրգերով առատ սեղանի մը շուրջը բաղմած, հիւրերը կ'ընդունէր: Բանաստեղծին կեանքին սէրը եւ տխրութիւնը բաժնող աղնիւ եւ բարի էակին հեղահամբոյր անձը տեսնելով՝ շատեր չկրցան զսպել յուզումնին: Թանգարանը՝ արդիական լաւադոյն դասաւորում ունէր. կազմակերպողները հոս յաջողած էին Թումանեանի կենդանի շունչը զգալի ընել այցելուներուն:

Սեպտ. 22-ին Կիրովականի վրայով, հիւրերը առաջնորդուեցան դէպի Դսեղ, բանաստեղծին ծննդավայրը, դուլելի կաղմակերպութեամբ: Ճամբու ընթացքին եւ Դսեղի մէջ պատրաստուած ընդունելութիւնները ավիրեքան թողուցին օտար հիւրերը, որոնցմէ մին՝ Փրոֆ. Մորիս Լը Ռուա, Պելճիքայի համալսարանէն, կ'ըսէր. «Հայերու հիւրասէր ըլլալը գիտէի, սէր. «Հայերու հիւրասէր ըլլալը գիտէի, բայց տեսածս եւ վայելածս՝ կը գերազանցէ ամէն չափ. անբացատրելի է, միակն է աշխարհի վրայ...»: Եւ թուէինքոյ՝ ոսկեհեր, ծաւի աչքերով ռուս երիտասարդ հեր, անվերապահ սէրը կը բանաստեղծը, իր անվերապահ սէրը կը յայտնէր հանդէպ հայ ժողովուրդին եւ հայ քնարին, եւ այդ սէրը կը տարածէր Հայաստանէն մինչեւ Վենետիկի գեղածիծաղ Հայոց կղզին, ուր Պայրէն տարիներով հայ լեզուն եւ քնարը լսած ու սիրած էր...: «Կ'ուզեմ տեսնել, կ'ըսէր, եւ վայելել Պայրէնի ձիթենիներուն հովանիին դովութիւնը»:

Դսեղը՝ մկրտուած էր Թումանեան:

Հիւրերուն մուտքը զիւղին մէջ՝ ցնծութեան երգերով, եւ տեղական տարազներով զարդարուն նաղելի աղջիկներու եւ մանչերու պարերով ընդունուեցաւ: Գիւղին հրապարակին վրայ կանգնած էր նոր յուշարձանը՝ մեծ Լօռեցիին, որուն պաշտօնական բացումը ճառերով եւ ուղերձներով կատարուեցաւ՝ բաղմահադար ժողովուրդին առջեւ: Հայաստանի հեռաւոր քաղաքներն ու գիւղերը, այդ օր, ներկայացուցիչ ունէին հոն: Թումանեանի արձանը տիտանային էր. արդի ոճը եւ դասականը՝ արուեստագէտի մտապատկերին մէջ չէ յաջողած ձուլուիլ. Թումանեան ոտքի է, ժայռի բեկորներուն կոթնած, գլուխը բարձր բռնած, ձախ ձեռքը կը բարձրացնէ յուզումով եւ սիրով համակուած շրթներուն, աչքերը յառած կարօտով՝ դմբուխ լեռներու գաղաթներու հորիզոնին. կարծես կ'արտասանէ... «Մեր ճամբէն խաւար, մեր ճամբէն գիշեր... ու մեր աչքերը նայում են կարօտ հեռու աստղերին, երկնքի ծէրին, թէ ե'րբ կը բացուի պայծառ առաւօտ, Հայոց լեռներում, կանաչ լեռներում»:

Դսեղի իր հօրենական տունն ալ նորոգուած էր. հոն հիւրերը հիւրասիրուեցան ընտանեկան փուռէն նո'ր հանուած ջերմ լաւաչով եւ սպիտակ պանիրով, ընտանեկան մաքուր սիրոյ եւ ուրախութեան խորհրդանշով:

Վերադարձին այցելցինք Սեւանին, Հայաստանի ծաւի եւ չքնաղ հարսին, որուն տեսքը եւ հրապոյրը՝ անպատմելի է. շուրջը՝ օտարներէն կը լսես միայն հիացումի աղաղակներ, զովեստներ:

Երեւան վերադարձին, կատարուեցաւ վերջին համադումար եւ փակում՝ Թումանեանական մեծղի եւ յաջող տօնակատարութիւններուն:

Շքեղ հանդէսներ տեղի ունեցան նաեւ Թիֆլիս եւ Մոսկուա, ուր հայ մեծ քնարերգակին հետ՝ Հայ ժողովուրդը, հայ բանաստեղծութիւնը փառաբանուեցաւ՝ համամարդկային չափերով:

Հ. ՍԵՐՈԲԷ ԱԳԸԼԵԱՆ